

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ավիացիոն բժշկության հարցերով փորձագետի կողմից 2023թ հունվարի 10-ից մինչև 2023թ. հուլիսի 10-ը եղած ժամանակահատվածում կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Ավարտին են հասցվել ավիացիոն բժշկական կենտրոնի (կենտրոնների)՝ ավիացիոն միջազգային կազմակերպությունների պահանջներին համապատասխանության հավաստագրման կարգի վերանայման աշխատանքները, նոր կարգը հաստատվել է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 18.01.2023թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎԻԱՑԻՈՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 301-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1-Ն հրամանով, կիրառվել է գործնականում, Կոմիտեի իրավաբանական վարչության հետ քննարկումներ են իրականացվել նոր փոփոխությունների առաջարկի վերաբերյալ:

2. 2022թ. -ին ընդունվել է նախաթռիչքային և նախահերթափոխային բժշկական զննման ընթացակարգ, որի ներդրման աշխատանքների վերահսկողություն և թերությունների շտկման աշխատանքներ են իրականացվել: 2023թ. փետրվարի 17-ին հանդիպում է կազմակերպվել ՀՀ ավիացիոն կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որի ընթացում իմ կողմից ներկայացվել են ավիացիոն մասնագետների բժշկական զննման ընթացակարգերը՝ բժշկական սերտիֆիկատներ ստանալու և նախաթռիչքային ու նախահերթափոխային զննման ծավալները, պատասխանել եմ հարցերին:

3. Հավաստագրվել են ավիացիոն բժշկության երկու նոր փորձագետներ՝ Կոմիտեի նախագահի 16.06.23թ. «ԱՎԻԱԲՈՒԺ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹԵՐԱՊԵՎՏ ԷԼԵՆՈՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՎԻՐԱԲՈՒՅԺ ՏԻԳՐԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԱՎԻԱԲԺՇԿԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 278-Ա հրամանով, գործող ԱԲՓ-ներին տրամադրվել է մասնագիտական աջակցություն:

4. Իրականացվել է Կոմիտեի կողմից հավաստագրված ավիացիոն բժշկական կենտրոնի աշխատանքների ընթացիկ հսկողություն՝ ավիացիոն բժշկական փորձագետների կողմից իրականացվող փորձաքննության հաշվետվական ձևերի կանոնավոր ստուգումներ:

5. Ընդունվել են ավիացիոն մասնագետների բժշկական պիտանիության վերաբերյալ անհատական որոշումներ՝ սահմանված պահանջներին ոչ լիարժեք համապատասխանության դեպքեր են դիտվել, իրականացվել է դեպքերի կրկնակի վարում, ընդունվել է մեկ որոշում բժշկական սերտիֆիկատի թողարկումը մերժելու, մի քանի դեպքերում սահմանափակումների կիրառումով թողարկելու վերաբերյալ, իսկ ևս մեկ դեպքի վերաբերյալ դեռևս չեն ներկայացվել սերտիֆիկատը վերականգնելու հիմնավորումներ:

6. Համակարգվել են Կոմիտեի նախագահի 2023թ մայիսի 11-ի թիվ 196-Ա հրամանով ստեղծված աշխատանքային խմբի աշխատանքները՝ «Ավիաբուժ» բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության վկայագրման պայմաններին շարունակական համապատասխանության ուսումնասիրության կազմակերպման և իրականացման աշխատանքները:

7. Ապահովվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի հաղորդակցությունը, Կոմիտեի աշխատողների, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ենթակա կառույցների կամ միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի, ԻԿԱՕ-ի, ԵԱՍԱ-ի) կողմից տրամադրված լրատվության մեկնաբանություններ են տրամադրվել:

8. Ուսումնասիրել և կարծիք են ներկայացրել Fly Arna կազմակերպության՝ ավիոհոլի և հոգեմետ նյութերի գործածման հսկողության ձեռնարկի վերաբերյալ:

9. Առցանց մասնակցել եմ՝ ս.թ. փետրվարի 13-ից 17-ը Բահրեյնում կայացած՝ Քաղաքացիական ավիացիայի հանրային առողջապահության խնդիրների կանխարգելման ու կառավարման հարցերով Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO) 10-րդ հանդիպմանը (CAPSCA EUR-MID/10) և ICAO ավիացիոն բժշկության սեմինարին, ներկայացրել եմ զեկույց «Արդյոք ավիացիոն բժշկության մեջ կիրառելի է մեկ տոկոս ռիսկի գնահատման մեթոդաբանությունը» վերնագրով, որտեղ իմ առաջարկը հիմնավորել եմ դեպքերի ներկայացմամբ:

10. Վերացվել է ԵԱՍԱ աուդիտի ընթացքում վերհանված թերությունը՝ սերտիֆիկատի մակնշման փոփոխության ընդունմամբ:

Արմինե Դանիելյան, բ.գ.թ.,
Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի
Ավիացիոն բժշկության փորձագետ
10.07.2023թ.



Արմինե Դանիելյանի կողմից կատարած աշխատանքները գնահատում եմ ........

Քաղաքացիական ավիացիայի
կոմիտեի նախագահ



Միհրան Խաչատրյան